«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Կարդալու կարողության զարգացում
ԱՌԱՐԿԱ	Մայրենի
ՀԵՂԻՆԱԿ	Ավետյան Սվետլանա
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Պարույր Սևակի անվան թիվ 8 հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն……..……..……3

Կարդալու կարողության զարգացում ……4

Եզրակացություն……..……16

Օգտագործված գրականության ցանկ……17

Ներածություն

Թեմայի արդիականությունը:

Երեխայի ծավալած ուսումնական գործունեության արդյունավետությունը, աշակերտների վերաբերմունքը հետագա ուսման նկատմամբ և նրանց բոլոր հաջողությունները հետագա գործունեության ընթացքում պայմանավորվածե նաև դպրոցական առաջին օրերի մանկավարժական հոգեբանական տեսանկյունով ճիշտ կազմակերպմամբ, այն առանձնահատկությունների հաշվառմամբ, որոնք հատուկ են 6 տարեկան երեխաներին:
Միայն այն դեպքում կարելի է արդյունավետև նպատակասլաց ղեկավարելնրանց զարգացումը, երբ տարվող աշխատանքները կառուցված են նրանց տարիքային առանձնահատկությունների իմացության և դրանց հաշվառման հիման վրա:

Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 6 տարեկաններն <<ապրում են տարիքային ճգնաժամ, որի ժամանակ նրանց մեջ ընդգծուն ենդառնում հակասության ոգին, կամակորությունը, անբավարարվածությունը, <<Ես ինքս>> դիրքորոշումը, ըմբոստությունը, խանդը (ուսուցչի, ծնողի, մտերիմ ընկերների նկատմամբ)>>: Որքան էլ որ այդ առանձնահատկությունները բազմազան են ու բազմաբնույթ, այնուամենայնիվ, օրինաչափորեն դրանք կարելի է խմբավորել:

Հետազոտական աշխատանքի նպատակը և խնդիրները:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել՝ նախաայբբենական փուլի ժամանակ առաջացող խնդիրները և դրանց լուծման եղանակները կարդալու կարողության ձևավորման համար:

Խնդիրներն են՝

- ուսումնասիրել՝ լեզվի զարացման ժամանակ առաջացող խնդիրները,
- ուսումնասիրել՝ լեզվի զարգացման ժամանակ առաջացող խնդիրների լուծման ուղիները:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը:

Հետազոտական աշխատանքը կազմված է՝ ներածական մասից, հիմնական մասից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Կարդալու կարողության զարգացում

Կարդալը մտավոր գործունեություն է, որը երեխայից պահանջում է տեսողական, լսողական և տարածական մտածողության զարգացում:

Այն սկսվում է նրա կյանքի առաջին գրքի՝ «Այբբենարանի» նկարների «ընթերցումից»: Երեխաները մինչև տառաճանաչ դառնալը փորձում են ընկալել և պատմել նկարները՝ պահպանելով դրանց բովանդակային ամբողջականությունն ու տրամաբանական հաջորդականությունը: Գրաճանաչության նախայբբենական շրջանը բնութագրվում է հատկապես երեխաների բանավոր խոսքի զարգացմանն ուղղված աշխատանքներով:

Գրաճանաչության այբբենական շրջանն արդեն առանձնանում է գրուսուցման և կարդալու նախնական կարողությունների ձևավորման աշխատանքներով:

Առանձին հնչյուն-տառերն ուսուցանելիս ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի դրանց պարզ ու հստակ արտաբերմանը:

Դրա համար անհրաժեշտ է գործնական աշխատանքների միջոցով զարգացնել

- լեզվի,
- շրթունքների,
- ստորին ծնոտի, և
- հետին քիմքի ճկունությունը նշարժողականությունը,
- խորացնել և ակտիվացնել աշակերտների լսողությունը, և
- հնչյունային վերլուծությունների միջոցով զարգացնել դրանց ճիշտ արտաբերությունը:

Դպրոց ընդունվող կամ ավագ նախադպրոցական տարիքի երեխայի մեջ նկատվում է օրգանիզմի բուռն զարգացում, որն ընթանում է այդ համակարգերի փոփոխություններով:

Դրանցով պայմանավորված՝ երեխան աստիճանաբար ձեռք է բերում իր ուժերին և մտավոր կարողություններին համապատասխան ծանրաբեռնվածություն կրելու հնարավորություն, որը դպրոցին պատրաստ լինելու կարևոր գործոններից է:

Տարիքային այս հատվածը բնութագրվում է իբրև ճգնաժամային և աչքի է ընկնում իր ինքնատիպությամբ։ Տարիքային նախկին ստորաբաժանման մեջ ճգնաժամային էր համարվում կյանքի յոթերորդ տարին։

Պայմանավորված հասարակության կյանքում սոցիալ-տնտեսական և մշակութային պայմանների փոփոխությամբ, երեխաների հոգեկան և կազմաբնախոսական զարգացման տեմպի զգալի արագացմամբ (աքսելերացիայով)՝ այժմ այն իջել է մինչև 6 տարեկանը, լուրջ փոփոխություններ են կատարվում երեխայի նյարդային համակարգում, մասնավորապես դա վերաբերում է գլխուղեղին։

Գիտնականների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վեց տարեկան երեխայի գլխուղեղի և նրա ենթակեղևի (որտեղ զետեղված են նյարդային բջիջները) քաշը հասնում է մեծ մարդու գլխուղեղի քաշի 90 տոկոսին։ Այդ տարիքում երեխայի գլխուղեղի գործունեության վերակառուցումն ու ձևավորումը, այսինքն՝ զարգացումը դեռևս շարունակվում է, և տարիքին անհամապատասխան մտավոր ծանրաբեռնվածությունը կազդի ոչ միայն նրա ուսումնական գործունեության արդյունավետության, այլև առողջության վրա։

Վերոհիշյալ առանձնահատկություններով պայմանավորված՝ 6-7 տարեկան երեխաները միևնույն գործունեությամբ երկարատև չեն կարող զբաղվել։ Երկար ժամանակ միևնույն աշխատանքով ծանրաբեռնելու դեպքում ոչ միայն կընկնի նրանց աշխատանքի արդյունա-վետությունը, այլև կխաթարվի առողջությունը։

«Այբբենարան»-ում տրված թեմատիկ, առարկայական և բառ-նկարների օգնությամբ երեխաներին գաղափար ենք տալիս խոսքի կամ ամբողջական պատմության», նախադասության ու բառերի մասին, այդ լեզվական անվանումները կապելով կոնկրետ հասկացությունների յուրացման հետ, որպեսզի դրանցից յուրաքանչյուրը որոշակի բովանդակություն ու իմաստ ստանա և հեշտությամբ մտապահվի։Առանձնապես օգտակար են նախադասությունները բառերի բաժանելու, առաջադրված բառերով նախադասություններ կազմելու, ինքնուրույն կերպով նախադասություններ ու բառեր ասելու վարժությունները։ Բառի մասին հասկացություն տալուց հետո՝ գաղափար պետք է տալ նաև վանկի՝ բառի արտասանական միավորների կամ մասերի վերաբերյալ։Այս կապակցությամբ էլ երեխաները կծանոթանան միավանկ և բազմավանկ բառ հասկացություններին։

Վանկից անցում է կատարվում հնչյունին, որպեսզի հետագայում բոլոր վերլուծությունները մինչև լեզվական տարրական մասնիկների տարբերակումը հասցնելու հնարավորություն ստեղծվի, և նախապատրաստվի գրաճանաչության ուսուցման համար։ Սկզբում գաղափար է տրվում վանկի, ապա նաև բառի մեջ եղած հնչյունների մասին, իսկ ավելի ուշ երեխաներին պետք է սովորեցնել տարբերակել հնչյուններն ըստ արտասանության երկարության կամ ժամանակի, ըստ ձայնի և աղմուկի հարաբերության։

Ըստ որում, երեխաները պետք է կարողանան տարբերել երկար արտասանվող և շատ ձայն ունեցող ձայնավոր և կարճ արտասանվող ու քիչ ձայն ունեցող բաղաձայն հնչյունները, դրանք արտահայտել գծային մոդելների վրա՝ սկզբում միայն հնչյունների քանակը, իսկ ապա նաև տեսակը նշելով։ Ամբողջ վերլուծության շղթան նախադասությունից մինչև հնչյուն տանող հաջորդականությամբ այսպիսի պատկեր կունենա գծային մոդելով արտահայտելիս։

Կարդալու նախապատրաստումը կարևոր աշխատանքներից մեկն է և այս շրջանին առանձնահատուկ։ Մինչև վերջերս կարդալու ալգորիթմի ձևավորմանն անդրադառնում էին միայն այբբենական շրջանում, երբ առաջին խումբ տառերի ուսուցումից հետո հնարավոր էր լինում դրանցից բառեր կազմել ու կարդալ։ Սակայն այժմ կարդալու մտավոր գործողությանը երեխաներին պետք է վարժեցնել դեռևս նախապատրաստական շրջանում՝ հիմք ունենալով բառերի գծային մոդելներն ու վանկային կորերը։ Այդ աշխատանքը կարելի է տանել հնչյունային տարբեր կառուցվածք ունեցող միավանկ ու տարբեր վանկային կառուցվածք ունեցող բառերի գծային մոդելների վրա վերլուծական ու համադրական աշխատանք կատարելով, որը նախապատրաստական շրջանում տարվող լեզվական աշխատանքի հիմնական բովանդակությունը պետք է կազմի։

Հասկանալի է, որ հնչույթավանկային մեթոդով պարապելիս հիմնականում վերցվում են երկվանկ բառեր, և ուշադրություն է դարձվում վանկերով կարդալու ալգորիթմի մշակմանը, իսկ հնչույթաբառային մեթոդով պարապելիս ավելի շատ վերցվում են միավանկ և ապա նոր երկվանկ բառեր, և ուշադրություն է դարձվում ամբողջական բառերով կարդալու ալգորիթմի ձևավորման վրա։ Այս դեպքում, եթե ընթերցվող բառը բազմավանկ է, և երեխաներն այն կարդում են վանկերով, ապա անպայման վերջնական աստիճանը պետք է համարվի վանկերի

ամբողջացումը բառի մեջ և բառի ամբողջական ընթերցումը: Առաջադրված բառերի գծապատկերները կազմելը կամ պատրաստի մոդելներին համապատասխանող բառեր գտնելը, դրանց հնչյունային ու վանկային կառուցվածքը գիտակցելը, այդ բառերն ըստ առաջադրված կամ նոր կազմված մոդելի կարդալը երեխաների մեջ մշակում է բառերի վանկային սահմանագիծն զգալու և ըստ այդմ բառը վանկերով կամ ամբողջական ձևով կարդալու կարողություն:

Այս կարողությունը հետագայում մշակվում ու կատարելագործվում է տառային հիմքով կատարվող վարժությունների ընթացքում, սակայն կարդալու սկզբնական կարողության ձևավորման հիմքը դրվում է այս շրջանում:

Գրաճանաչության շրջանում երեխաների առջև ծառացած ամենահիմնական խնդիրը բառի հնչյունային վերլուծությունը և յուրաքանչյուր հնչյուն իր համապատասխան տառի հետ կապելն է, աչքի առջև տառեր ունենալով դրանց հնչյունները հիշելն ու արտաբերելը, վանկի ու բառի մեջ դրանք միավորելն ու արտաբերելը՝ որպես արտասանական միաձույլ ամբողջություն: Քանի դեռ անցած հնչյունը և տառը բավականաչափ չեն ամրապնդվել երեխաների գիտակցության մեջ, կայուն կապեր չեն ստեղծվել հնչյունի, նրա տառերի գրաֆիկական պատկերների, դրանց գրության ու արտասանության համար անհրաժեշտ կինեսթետիկ շարժումների միջև, հնչյունը և տառը յուրացված համարել չի կարելի, ուրեմն և նոր հնչյուն դեռևս չպետք է անցնել: Հնչյունի ու նրա տառերի լրիվ յուրացման համար կարևոր նշանակություն ունի դրանց հաճախակի կրկնությունը հետագա նյութերում, որպեսզի արդեն ուսուցված հնչյունի ու նրա տառերի յուրացումը կայունանա, ամուր զուգորդումներ ստեղծվեն, որպեսզի դրանք նոր կապակցությունների մեջ մտնեն ուսուցվող և արդեն ուսուցված հնչյունների ու դրանց տառերի հետ:

Բառի մեջ առանձին հնչյունը երեխաների համար լսելի դարձնելու նպատակով որոշակի աշխատանք պետք է տանել ինչպես նախապատրաստական, այնպես էլ գրաճանաչության շրջանում: Եթե նախապատրաստական շրջանում երեխաները վարժվում են առանձին հնչյունները լսելու և դրանք միմյանցից տարբերելու մեջ, ապա գրաճանաչության շրջանում յուրաքանչյուր առանձին հնչյուն, որը նոր ու անծանոթ է նրանց համար, սովորում են անջատել ծանոթ ու անծանոթ հնչյունների հնչյունախմբից:

Հնչյունի ուսուցումն ավարտելուց հետո պետք է անցնել նրա տառերի ուսուցմանը: Ուսուցիչը հատվող մեծադիր այբուբենից վերցնում է անցած, հնչյունի տպագիր փոքրատառը և, ցույց տալով րեխաներին, ասում է, որ դասավորած հնչյունի փոքրատառն է, ապա ցույց է տալիս նաև մեծատառը, համեմատում դրանք, որպեսզի մտապահումը հեշտանա: Տառը ցուցադրելիս ուսուցիչն աշակերտների ուշադրությունը հրավիրում է նրա վրա և բացատրում, թե տառն ինչպես է ստացվում, ինչ գծերի համադրության արդյունք է:

Երեխաների մեջ հնչյունի ու նրա տառերի միջև ամուր կապեր ստեղծելու նպատակով ուսուցված հնչյունի ու նրա տառերի ամրապնդման դասերին կարելի է անցկացնել մի շարք բնորոշ վարժություններ՝

- ասել հնչյունը և պահանջել, որ երեխաները ցույց տան տառարանից հանած համապատասխան տառը,
- ասել բառեր, պահանջել, որ ցույց տան բառի առաջին հնչյունին համապատասխանող տառը և այլն:

Տառն ազդում է տեսողության, իսկ հնչյունը՝ լսողության վրա, այդ երկու գրգռիչներն էլ ուղեղի կեղևի տեսողական, լսողական, իսկ արտասանելու ժամանակ նաև շարժողական կենտրոններում առաջացնում են համապատասխան գրգիռներ:

Ուղեղի կեղևի մի քանի կետերի միաժամանակյա գրգռման ազդեցության տակ ուղեղի այդ կենտրոնների միջև որոշակի կապ է ստեղծվում, որի հետևանքով տառի ընկալումը կարող է կարդացողի մոտ առաջացնել համապատասխան հնչյունային պատկերացում և, ընդհակառակն, որևէ հնչյունի արտասանումը կամ լսողական ընկալումը կարող է առաջացնել համապատասխան տառի պատկերացում: Դրանով ժամանակային կապեր են ստեղծվում տառի և հնչյունի միջև:

Կարդալու սկզբնական կարողություններ եխաների մեջ սկսում է ձևավորվել դեռևս նախապատրաստական շրջանում, երբ նկարների ու գծային մոդելների օգնությամբ նրանք միավանկ ու բազմավանկ բառերը վանկերով ու ամբողջական բառերով կարդալու վարժություններ են կատարում:

Կարդալու կարողության ձևավորումը տեղի է ունենում երեք փուլերով՝

1. վերլուծում,

2. համադրում,և
3. ավտոմատացում։

Վերլուծական շրջանում կարդալու կարողության ձևավորումը տեղի է ունենում երկու ձևով՝

1. տառերի ճանաչումով,
2. վանկերի ու բառերի մեջ դրանց հնչյունների միավորումով։

Երեխայի մեջ տեղի ունեցող հոգեբանական այս երկու գործողություններն ըստ ժամանակի չեն համընկնում միմյանց հետ և առանձնահատկություններով էլ տարբերվում են միմյանցից։

Այս առումով վերլուծական շրջանն իր հերթին բաժանվում է երկու աստիճանի՝

1. տառերի ճանաչում և դրանց համապատասխան հնչյունների հետ կապակցում կամ սովորած հնչյուն-տառերի զուգորդում,
2. վանկային վերլուծություն ու ընթերցում։

Կարդալու ուսուցումը գործող երկու այբբենարաններով սկսվում է վանկից կամ ամբողջական բառից՝ նայած ուսուցումը որ մեթոդով է տարվում և ինչը պետք է կարդալու սկզբնական միավոր դառնա։

Վանկի դերն առանձնապես մեծ է կարդալու ուսուցման գործում։
Այստեղ հիմնականում դժվարությունն այն է, որ որպես արտասանական միավոր շատ հեշտ ընկալվող վանկը կարդալու ժամանակ հեշտ չի տարբերակվում, քանի որ վանկի կայուն մոդել չկա, այն խիստ դինամիկ է, և երեխաները դժվար բառի մեջ ինքնուրույն կերպով չեն կարող վանկն առանձնացնել ու կարդալ։

Երեխան նախ յուրացնում է տառերը և ապա, յուրացնում է նաև այդ տառերի կապակցությունը՝ սկզբում վանկերի, ապա նաև բառերի մեջ։

Կարդալու մտավոր գործողության զարգացման այս աստիճանը ռուս մեթոդիստ Ա. Տրոշինն անվանել է վանկային կամ վանկերով ընթերցելու աստիճան։ Չնայած այս շրջանում ուսուցիչ նաշակերտներից պահանջում է կարդալ միայն վանկերով կամ ամբողջական բառերով, սակայն այդ երբեք էլ չի նշանակում, թե երեխաները միանգամից ընկալում են վանկը կամ բառը։ Իհարկե, այս պահանջը միանգամայն տեղին է, սակայն այս դեպքում

վանկի կամ բառի մեջ տառեր ու դրանց հնչյունների միաձուլումը փաստորեն տեղի է ունենում մտքում՝ ներքնապես, որովհետև կարդալու կարողությա նձևավորման այս աստիճանում երեխան, առանց վանկի կամ բառի մեջ եղած բոլոր տառերը ճանաչելու, չի կարող այն կարդալ:

Իմ աշխատանքային փորձից ելնելով բերեմ մի օրինակ, որը հաճախակի կիրառում եմ իմ դասընթացները անցկացնելիս նդրանց միջոցով կարողանում ենք հաղթահարել՝ նախաայբբենական փուլի ժամանակ առաջացող խնդիրները:

1. Դի՛ր գծապատկերի կողքին

Առաջադրանքի/խնդրի պայմանը

Գտի՛ր՝ նկար-բառերից ո՞րի վանկային գծապատկերն է տրված:



2. Միավանկ և բազմավանկ բառեր

Առաջադրանքի/խնդրի պայմանը

Ընտրի՛ր երկվանկ նկար-բառերը:

Բառի ու բառաշարքերի ընթերցումն այն առանձնահատկությունն ունի, որ երեխաները բառի մեջ եղած բոլոր տառերը տեսնելու, դրանք իրենց համապատասխան հնչյուններին վերածելու և վանկերի ու ամբողջական բառի մեջ միավորելու հետ միասին պետք է կարողանան պահպանել նաև հայերենին հատուկ բառային շեշտը, որը չնչին բացառությամբ միշտ դրվում է բառի վերջին վանկի ձայնավոր հնչյունի վրա: Եթե այդ ձայնավորը ը-ն է, այդ դեպքում շեշտը դրվում է նախորդ վանկի ձայնավորի վրա, որովհետև ը-ն շեշտ չի վերցնում:

Բառը հեշտ կարդալ սովորեցնելու գործում կարևոր նշանակություն ունեն հատվող այբուբենով կատարվող վարժությունները, երբ երեխաները վանկային ու հնչյունային վերլուծության են ենթարկում բառը, տառային համադրություններ են կատարում և վանկերով ու ամբողջովին կարդում վանկ առ վանկ հավաքած բառը:

Օգտակար պետք է համարել նաև նմանությամբ կարդալը, որը հատկապես մեծ կիրառություն ունի բառաշարքերն ընթերցելիս: Այստեղ ընթերցվող նյութի թե՛ քանակական և թե՛ որակական բարդացում է կատարվում, որովհետև բառաշարքերը կազմվում են յուրաքանչյուր շարքում վանկային կառուցվածքով ու հնչյունային կազմով նման բառերի ընդգրկման սկզբունքով,

որպեսզի առաջին բառի ընթերցումը հիմք ստեղծի երկրորդի ընթերցման համար: Այս բառաշարքերից յուրաքանչյուրում ընդգրկված առանձին խումբ բառերի միջև լինում են և՛ նմանություններ, և՛ տարբերություններ, առաջինը՝ ընթերցումը հեշտացնելու, իսկ երկրորդը՝ բառն արտաբերելուց առաջ այն անպայման մտովի կարդալուհամար:

Այս ինքնաստուգումը խիստ կարևոր է, որպեսզի երեխան առանց կարդալու, միայն կռահումով չարտասանի բառը:

Օրինակ՝

1. Գտի՛ր սխալը

Առաջադրանքի/խնդրիպայմանը

Որոշի՛ր՝ նկար-բառերից ո՞րն է սխալ պատկերել նկարիչը:



2. Պատմություն: Նախադասություն: Բառ

Առաջադրանքի/խնդրի պայմանը

Նշի՛ր նկար-բառերը:



Բառակապակցության ընթերցումը ևս իր առանձնանահատկությունն ունի, և դա ուսուցման ժամանակ պետք է հաշվի առնել:Բառերի կապակցման, միմյանց վերագրելու ամենափոքր միավորը բառակապակցությունն է, որն ինչպես առանձին վերցրած, այնպես էլ նախադասության մեջ գիտակցվում է որպես ինքնուրույն, կայուն կամ ժամանակավոր կապակցություն:

Այդ կապակցված լինելը կամ հատկանիշը առարկային վերագրելը պետք է արտահայտվի նաև կարդալու եղանակով կամ բառերի արտաբերման հնչերանգով, սրպեսզի կարմիր վարդ, սարի շուշան բառակապակցություններից յուրաքանչյուրն արտաբերվի որպես իմաստով կապված միավոր, դրանցում եղած բառերը չհնչեն որպես առանձին ու անկախ միավորներ: Այստեղ

բառակապակցության մեջ մտնող բառերի կապը զուտ տրամաբանական է, քերականական արտահայտությունչունի, սակայն ընթերցման ժամանակ ձայնի բարձրացումով ու ցածրացումով այն կապն այնպես ցայտուն պետք է արտահայտվի, որպեսզի լսողն այդ երկու բառն ընկալի որպես միմյանց հետ կապված մի ամբողջություն։

Նախադասության ընթերցումը ևս իր առանձնահատկությունն ունի, և այն որոշակի դժվարություն է ներկայացնում երեխաների համար։ Նախադասության մեջ մտնող բառերի միջև եղած փոխադարձ կապվածությունը երեխաներին գիտակցել տալու համար պետք է կարդալուց հետո նրա վերաբերյալ հարցեր տալ։

Օգտակար պետք է համարել նաև ընթերցման տեմպի դանդաղեցումը, կրկնաընթերցումը և կարդացածի պատմելը։Դրանք հնարավորություն են տալիս ճիշտ ընկալելու ոչ միայն կարդացած յուրաքանչյուր բառի բառիմաստը, այլև դրանց միջև եղած տրամաբանական ու քերականական կապերը և ամբողջ նախադասության միտքը, որը ոչ թե նրա մեջ եղած բառերի բառիմաստների պարզ գումարն է, այլ իմաստային բոլորովին նոր որակ։

Կապակցված բնագրի ընթերցումը ևս իր առանձնահատկություններն ունի, որովհետև այստեղ տառի, վանկի ու բառի փոխարեն ընկալման միավորներ են դառնում ամբողջական նախադասությունները, որոնց ընկալումն ու միմյանց հետ կապակցումը երեխայի համար լուրջ դժվարություն է ներկայացնում։

Բնագրի ընթերցման մյուս դժվարությունը կախված է հնչերանգի զգացողության բարդացման, տրամաբանական շեշտերի ու դադարների պահպանման հետ։

Եթե նախադասությունը կարդալիս երեխան գրեթե յուրաքանչյուր բառից հետո դադար է տալիս, ապա այստեղ դադարները պետք է լինեն յուրաքանչյուր նախադասության վերջում, ձայնի բարձրացումն ու ցածրացումը կապված պետք է լինեն նախադասության տրամաբանական շեշտի և վերջակետի ճիշտ զգացողության հետ։

Այս նպատակով յուրաքանչյուր բնագիր կարդալուց առաջ երեխաներին պետք է դիտել տալ բնագրին վերաբերող նկարը, իսկ ապա զրույց անցկացնել դրա շուրջ, որպեսզի հնարավոր լինի նրանց թեմայի ոլորտը մտցնել։ Դրան մեծապես կարող է օգնել նաև բնագրի դիտումը կամ «լուռ ընթերցումը», որը լուռ կարդալու ուսուցման ձևերից մեկն է։Գործադրելի են նաև բառերի շուրջ տարվող բառային աշխատանքը, բովանդակության վերարտադրումը, կրկնաընթերցումը և այլն,

որոնք հնարավորություն են տալիս աշակերտներին վարժեցնել բնագրի ընթերցման մեջ, սովորեցնել գեղեցիկ ու կանոնավոր կարդալ, տիրապետել կարդալու կարողությանը:

Օրինակ՝

1. Պատմություն: Նախադասություն

Պատմության և նախադասության մասին գաղափարները տրվում են նկար - պատմությունների և նկար-նախադասությունների ու դրանց համապատասխան գծապատկերների միջոցով:

Նկար-պատմություններն այն նկարներն են, որոնց բովանդակությունը կարելի է արտահայտել պատմությամբ, իսկ նկար-նախադասություններն այն նկարներն են, որոնց բովանդակությունը կարելի է արտահայտել մեկ նախադասությամբ:

Այսպես.

պատմություն -



նախադասություն –



Եզրակացություն

Այսպիսով, նախապատրաստական շրջանը ոչ միայն անհրաժեշտ, այլև խիստ կարևոր է բոլոր դպրոցների ու բոլոր առաջին դասարանների համար, որովհետև հետագա աշխատանքի ամբողջ հաջողությունը մեծ չափով կախված է նաև աշակերտների դպրոցի համար լավ նախապատրաստված լինելուց, այն ինչ երեխաների մեծ մասն առայժմ դպրոց է գալիս չնախապատրաստված, ուստի այդ նախապատրաստությունը պետք է ստանա դպրոցում։

Այդ նախապատրաստությունը պետք է կատարվի ժամանակակից մանկավարժական գիտությունների պահանջներին համապատասխան, որոշակի ծրագրով ու մեթոդներով, որպեսզի անհրաժեշտ արդյունք տա, նպաստի երեխայի մտավոր զարգացմանը, նախաայբբենականփուլիժամանակառաջացողխնդիրների լուծման համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը։

Այս շրջանի համար բնորոշ են հետևյալ հիմնական խնդիրները՝

- աշակերտների ծանոթացումը դպրոցական կարգուկանոնին,
- երեխաների խոսքի զարգացումը,
- տեսողության,
- լսողության,
- կինեսթետիկ զգացողության և ուշադրության մշակումը,
- գրելու համար ձեռքի նախապատրաստումը,
- կարդալու սկզբնական կարողության ձևավորման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը,
- աշխարհաճանաչողական տարրական տեղեկությունների հաղորդումը,
- աշակերտների ուսումնասիրումը,
- դասարանական միասնական կոլեկտիվի ստեղծումը և այլն։

Այս աշխատանքներից ամեն մեկը յուրովի վերցրած տարբեր տիպի պարապմունքների մի ամբողջ համակարգ է կազմում, սակայն առանձին ու անկախ հանդես չի գալիս.հնարավոր չէ ասել, թե երբ է ավարտվում մեկը և երբ է սկսվում մյուսը, որովհետև դրանք խորապես միմյանց մեջ ներթափանցված, փոխադարձորեն միմյանց լրացնող ու ամբողջացնող աշխատանքներ են։

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Տեր-Գրիգորյան., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980
2. Ա. Բահաթրյան., Մայրենի լեզվի ուսուցումը տարրական դպրոցների մեջ, Երևան 1878
3. Ա.Տեր-Գրիգորյան.,Աշխատանքայբբենարանով,Երևան 1979
4. ԲահաթրյանԱ., «Ուղեցույցհայուսուցչի, ընդհանուրմեթոդիկաևառաջինտարվանյութիմշակումը», Թիֆլիս 1882